ՄԱՐԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու

ՀՀ – ԵՄ ԵՎ ՀՀ – ԵԱՏՄ. ԻՆՏԵԳՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Սույն հոդվածի շրջանակներում ներկայացվել են ԵՄ և ԵԱՏՄ ազդեցության դրական ու բացասական հետևանքները ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում, փորձ է արվել վերլուծելու զարգացման հնարավորությունները տվյալ միություններին ինտեգրվելու արդյունքում:

Հիմնաբառեր. *ԵՄ, ԵԱՏՄ, ինտեգրման արդյունքներ, տնտեսության զարգացում*
JEL: F5, F50, F53

Վերջին մի քանի տասնամյակի զարգացման միտումները ցույց են տալիս, որ համաշխարհային տնտեսության համընդհանրացումն այն հիմնական գործոններից է, որոնք կանխորոշում են երկրների տնտեսությունների զարգացման տեմպերն ու օրինաչափությունները: Ընդ որում, համընդհանրացման բացասական ազդեցությունն ավելի մեծ է հատկապես զարգացող և անցումային երկրների վրա, ինչպիսին նաև Հայաստանն է, քանի որ վերջիններս գտնվում են սոցիալ-տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների ընթացքում, ինչը զգալիորեն բարդացնում է դրանց մուտքը համաշխարհային տնտեսություն: ՀՀ մասնակցությունը միջազգային տնտեսական միասնացման գործընթացներին, որը վերջին մի քանի տարիների ընթացքում դրսևորում է ակտիվացման միտում, շուկայական տնտեսության ձևավորման և ազգային տնտեսության արդյունավետ զարգացման նախապայմաններից մեկն է: Սակայն մեր երկրի ոչ բավարար մասնակցությունն այդ գործընթացներին, մասնավորապես՝ Եվրոմիության երկրների հետ համագործակցությունը, բացասական ազդեցություն է ունենում տեղական ապրանքների մրցու-

նակության վրա և մեծ խոչընդոտ է տարածաշրջանային հեռանկարային շուկաներ մուտք գործելու տեսանկյունից:

ՀՀ-ի համար Եվրոմիությունն այլ ինտեգրացիոն խմբավորումներից առանձնանում է միասնացման և արտաքին տնտեսական կապերի նշանակության տեսանկյունից: Եվրոմիությունն աշխարհի միակ ինտեգրացիոն կառույցն է, որը հասել է միասնացման բարձրագույն աստիճանին՝ տնտեսական և արժութային միության ձևավորմանը: Այժմ, իր կազմում ունենալով 28 երկիր, ներկայացնում է գրեթե բոլոր եվրոպական պետությունները՝ ընդգրկելով ընդհուպ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի արևմտյան սահմանները: Եվրոպական միության ընդունած բոլոր որոշումները, հատկապես տնտեսության ոլորտում, առնչվում են աշխարհի բոլոր երկրների շահերին:

Սկզբնական շրջանում անդամակցող երկրների զարգացման տարբերությունները, հնարավորությունների անհավասար հասանելիությունը խոչընդոտում էին տնտեսական աճին: Այնուհետև եվրոպական քաղաքականություն մշակողները ճշգրտեցին տարածաշրջանային քաղաքականությունը, օրենքներ ընդունեցին, որոնք նպատակամղված էին անդրադառնալու տնտեսական և սոցիալական մարտահրավերներին՝ ձգտելով ավելի ճիշտ համապատասխանեցնել ծախսերն ու որակը ու նաև օգնել ԵՄ-ին՝ ընդլայնումից հետո դիմակայելու տնտեսական ու սոցիալական պայմանների մեծ բազմազանությանը: Միասնացման ծրագրերը նպաստեցին աճի և նոր հմտությունների ապահովմանը[1]:

ԵՄ-ի հետ ՀՀ համագործակցությունը մեծապես նպաստել է Հայաստանում տնտեսության, արդարադատության, պետական կառավարման ոլորտներում բարեփոխումների իրականացմանը, ժողովրդավարական հասարակության կայացմանը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությամբ զբաղվող ինստիտուտների ամրապնդմանը:

2017 թ. նոյեմբերի 24-ին ստորագրվել է ՀՀ–ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, որը նախաստորագրվել էր դեռևս 21.03.2017 թ.: 386 հոդվածի սահմաններում համաձայնագիրն անդրադառնում է ԵՄ-ՀՀ գործընկերության ամենաբազմազան՝ քաղաքական, քաղաքացիական, իրավական, տնտեսական, էներգետիկ, բնապահպանական, կրթական, մշակութային և այլ ոլորտների կարգավորմանը, ինչպես նաև այդ ոլորտների բարեփոխումներին ու զարգացմանը խթանելու անհրաժեշտությանը[2]:

Տնտեսական երկխոսությանը վերաբերող հատվածում նշվում է, որ ՀՀ-ն պետք է քայլեր ձեռնարկի լավ գործառնող շուկայական տնտեսության զարգացման և իր տնտեսական ու ֆինանսական կարգավորումներն ու քաղաքականությունն աստիճանաբար ԵՄ-ին մոտեցնելու ուղղությամբ: Եվրոմիությունն, իր հերթին, կաջակցի Հայաստանին հուսալի մակրոտնտեսական քաղաքականության մշակման գործում՝ ներառյալ Կենտրոնական բանկի անկախության և գների կայունության, հուսալի պետական ֆինանսների, արտարժույթի կայուն փոխարժեքի և վճարային հաշվեկշռի հարցերը: Ըստ համաձայնագրի՝ կողմերը հանձնառում են խորացնել փոխօգնությունը և տեղեկատվության փոխանակումը իրականացվող մակրոտնտեսական քաղաքականության վերաբերյալ[3]:

---

[1] Տե՛ս http://ec.europa.eu/regional_policy/sources/international/pdf/external_hy.pdf
[2] Տե՛ս https://eeas.europa.eu/sites/eeas/files/arm_factsheet_armenia_arm_digital.pdf
[3] Տե՛ս http://mfa.am/u_files/file/CEPA.pdf

Պայմանագրի ոչ մեծ հատված նվիրված է հարկային համակարգին, որով ԵՄ-ն պատրաստակամություն է հայտնում աջակցելու ՀՀ հարկային համակարգի և հարկային վարչարարության կատարելագործմանը՝ նպաստելով մաքսանենգության դեմ պայքարին:

Նախատեսվում է Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի սկզբունքների հիման վրա իրագործել ՓՄՁ զարգացման ռազմավարություններ, ինչպես նաև կատարել այդ գործընթացի մշտադիտարկում՝ կանոնավոր կերպով հաշվետվություններ ներկայացնելու և երկխոսության միջոցով:

Համաձայնագիրը կարգավորում է առևտրային համագործակցությունը, որը վերահաստատում է ԱՀԿ սահմանած միջազգային առևտուրը կարգավորող սկզբունքները, բացառում է արտահանման մաքսատուրքերի կիրառումը, սակայն կողմերից յուրաքանչյուրը շարունակում է գործադրել ներմուծվող ապրանքների նկատմամբ նախկինում առկա մաքսային ռեժիմը: Այդուամենայնիվ, ԵՄ-ն և ՀՀ-ն ցանկություն են հայտնում շարունակելու համագործակցությունը ՀՀ մաքսային վարչարարության կատարելագործման և մաքսանենգության ու խարդախության դեմ պայքարելու նպատակով: Համաձայնագրով նախատեսվում է ստեղծել մաքսային հարցերով զբաղվող ենթակոմիտե, որը պարբերաբար կանցկացնի հանդիպումներ և կվերահսկի մաքսային ոլորտին առնչվող տեխնիկական աջակցությունը, ապրանքների ծագման երկիրը որոշելու մասին կանոնները, մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև մաքսային ընթացակարգերի պատշաճ կատարմանը վերաբերող դրույթների կիրարկումը:

Առանձին հատված նվիրված է ներդրումներին, որով սահմանվում է, որ երկկողմ ներդրումները դյուրացնելու նպատակով ՀՀ-ն և ԵՄ-ն համաձայնագրի կնքումից հետո 3 տարվա ընթացքում, այդուհետ՝ պարբերաբար, համատեղ գնահատելու են ՀՀ ներդրումային միջավայրն ու ներդրումների վերաբերյալ իրավական դաշտը, որի հիման վրա կողմերը հաշվի են առնում բանակցություններ սկսելու հնարավորությունը՝ համաձայնագրի փոխադարձ ներդրումներին, այդ թվում ներդրումների պաշտպանությանը վերաբերող դրույթները լրամշակելու նպատակով:

Համաձայնագիրը անդրադառնում է նաև կողմերի քաղաքացիների շարժունակությանը: Մասնավորապես նշվում է, որ կողմերը պետք է շարունակեն խթանել քաղաքացիների շարժունակությունը ինչպես ԵՄ-ի և ՀՀ-ի միջև կնքված մուտքի արտոնագրերի (վիզաների) դյուրացման համաձայնագրի կիրառման, այնպես էլ համապատասխան ժամանակահատվածում վիզաների ազատականացման շուրջ երկխոսություն սկսելու միջոցով:

Համաձայնագիրն արծարծում է կրթությանն ու երիտասարդությանն առնչվող հարցերը՝ ընդգծելով այս ոլորտում փոխգործակցության կարևոր դերը ԵՄ-ի և ՀՀ-ի միջև համագործակցությունն ու քաղաքական երկխոսությունն ակտիվացնելու գործում: Նշվում է, որ պետք է հատուկ ուշադրության կենտրոնում պահել մասնագիտական և բարձրագույն կրթությունը՝ որպես աշխատատեղեր ստեղծելու բանալի, կրթության և վերապատրաստման համակարգերի արդիականացումը, օտար լեզուներ սովորելու խրախուսումը: Հատուկ ընդգծվում է համագործակցությունը եվրոմիասնացման գործընթացի ընկալման և դրա վերաբերյալ իրազեկության նպատակով, ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում գիտական երկխոսություն ծավալելու և Եվրոպական միության համապատասխան ծրագրերին մասնակցելու անհրաժեշտությունը:

Հնարավոր դրական էֆեկտը, որը կապահովի ՀՀ-ին այս պայմանագիրը, կապված կլինի ոչ թե ապրանքային առևտրի, այլ ծառայությունների հետ: Ծառայություններին վերաբերող պահանջները համաձայնագրում ավելի կոշտ են: Ներկայումս Հայաստանի ծառայությունների արտահանումն ու ներկրումն այնքան էլ զարգացած չեն, ուստի սա զարգացման մեծ հնարավորություն է՝ ոլորտում նոր ներդրումներ ներգրավելու շնորհիվ:

Անդրադառնանք նաև վերջին տարիներին ԵՄ-ի կողմից ՀՀ-ին ցուցաբերված աջակցությանը տարբեր բնագավառներում: Մասնավորապես՝

Ժողովրդավարություն. ԵՄ-ն աջակցում է Հայաստանում ժողովրդավարական կառավարման բարեփոխումներին: Միայն 2014–2017 թթ. ԵՄ-ն Հայաստանին տրամադրել է 140–170 միլիոն եվրո՝ հիմնականում մասնավոր հատվածի զարգացման և հանրային կառավարման ու օրենսդրության ոլորտի բարեփոխման համար: Այսպես օրինակ՝ ԵՄ-ն 7.5 միլիոն եվրո է տրամադրել ՀՀ Կառավարությանը՝ ընտրական օրենսդրության բարելավմանն աջակցելու, 14.8 միլիոն եվրո՝ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանն ու մաքսային և սահմանային կառավարման բարեփոխումների նպատակով:

Տնտեսություն. ԵՄ-ն ՀՀ խոշորագույն արտահանման շուկան է, որին բաժին է ընկնում ՀՀ առևտրի ընդհանուր ծավալի մոտ 23.6%-ը: Ընդ որում, Հայաստանն ավելի շատ արտահանում է ԵՄ երկրներ, քան ներմուծում: 2017 թ. ԵՄ անդամ երկրներին բաժին է ընկել ՀՀ արտահանման շուրջ 30.3%-ը. սա դարձել է ՀՀ խոշորագույն արտահանման շուկան: ԵՄ-ից ներմուծումը կազմել է ընդհանուր ներմուծման ծավալի 22%-ը: ԵՄ-ն 2009 թվականից ի վեր հայաստանյան ընկերություններին հատկացրել է ավելի քան 473 միլիոն եվրո (դրամաշնորհների տեսքով): Ընդհանուր առմամբ, եվրոպական կողմի հատկացրած դրամաշնորհներով աջակցություն է ստացել 25.000 ձեռնարկություն, ստեղծվել է 900 նոր աշխատատեղ[4]:

Կրթություն, գիտություն և այլ ոլորտներ. ԵՄ հետազոտական և նորարարական «Հորիզոն 2020» ծրագիրը Հայաստանում սկսել է գործել 2016-ից: Միայն 2015–2017 թթ. ընթացքում «Էրազմուս+» ծրագրի շրջանակում Եվրոպայում սովորել կամ ուսուցում են ստացել հայաստանցի 1300 ուսանող և դասախոս: ԵՄ աջակցությամբ Հայաստանի մարզերում վերանորոգվել է մասնագիտական ուսուցման 17 քոլեջ: ԵՄ-ն Հայաստանին մարդասիրական օգնություն տրամադրող ամենախոշոր դոնորներից է: Միայն 2016 թ. ԵՄ անդամ երկրների համախառն աջակցության մասնաբաժինը Հայաստանին կազմել է 24.2% (կամ մոտ 10 միլիոն եվրո): ԵՄ օժանդակության շնորհիվ (1.1 միլիոն եվրո) Երևանի բոլոր բնակիչների համար բարելավվել է խմելու ջրի որակը: 7000 հայաստանյան տնային տնտեսություն աջակցություն է ստանում ԵՄ-ից էներգաարդյունավետության համակարգերի թարմացման նպատակով: 2010-ին ԵՄ մի շարք կառույցներ համաձայնության եկան՝ համաֆինանսավորելու Երևանի Մետրոպոլիտենի բարեկարգումը: 2008-ից 2014 թթ. Եվրոպական միությունը Հայաստանի պետական մարմիններին տրամադրել է ավելի քան 270 միլիոն դոլարի անհատույց դրամաշնորհ (Կառավարության ստացած դրամաշնորհների 51%-ը)[5]:

---

[4] Տե՛ս http://armstat.am/am/?nid=717

[5] Տե՛ս Հաշվետվություն Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ, Եր., էջ 120:

Ստորև անդրադառնանք ՀՀ անդամակցությանը մեկ այլ միության, այն է՝ Եվրասիական տնտեսական միությանը:

Տարածաշրջանային տնտեսական միասնացումը անդամ երկրների համագործակցության աստիճանական խորացման գործընթաց է, որը սկսվում է երկրների միջև ապրանքների և ծառայությունների շարժի ազատականացումից, ընթանում արտադրության գործոնների բացարձակ շարժունակության, արժութավարկային, բյուջետային, սոցիալական միասնական համակարգի ձևավորման, գյուղատնտեսական և արտաքին տնտեսական փոխհամաձայնեցված քաղաքականության իրականացման ուղիով: Տարածաշրջանային տնտեսական միասնացման առանձնահատուկ ձևերից մեկն էլ ԵԱՏՄ-ն է: 2015 թ. հունվարի 2-ին ՀՀ-ն դարձավ Եվրասիական տնտեսական միության անդամ, և այս 3 տարիների ընթացքում տնտեսությունում գրանցվել են հետևյալ ցուցանիշները.

Ազգային հաշիվների համակարգ. 3 տարեկան միասնական միության բոլոր երկրների տնտեսական ցուցանիշներն այս տարի «դրական նշանով» են: Առաջին կիսամյակում միասնական ՀՆԱ-ն աճել է 1.8%-ով, ներքին առևտուրը՝ 28%-ով, 3-րդ երկրների հետ առևտրի աճը կազմել է 26%: ԵՄ երկրների մեծ մասում մեկ շնչին բաժին ընկնող տարեկան ՀՆԱ-ն մոտ 35.000-45.000 ԱՄՆ դոլար է, ՌԴ-ինը՝ 14.600 դոլար, Բելառուսինը՝ 7.500 դոլար, Ղազախստանինը՝ 13.000 դոլար: ՀՀ-ում 2017 թ. նկատվել է 5.8% տնտեսության աճ. մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն տարեկան կազմել է 3835 ԱՄՆ դոլար: ԵԱՏՄ մուտք գործելով՝ ՀՀ լրացուցիչ տնտեսական էֆեկտը եղել է 2.2%, որից 1.4%-ը՝ գազի սակագնից[6]:

Գործազրկություն. ԵԱՏՄ-ում գործազրկության մակարդակը 2017-ին, 2016 թ. համեմատությամբ, նվազել է 6.5%-ով: Բելառուսն ունի գործազրկության ռեկորդային ցածր մակարդակ՝ 0.5%, Ռուսաստանում (5.2%), Ղազախստանում (4.9%) և Ղրղզստանում (8%) գործազրկության մակարդակը մոտ է բնականին, իսկ ՀՀ-ում, անդամ երկրների շարքում, գործազրկության ամենաբարձր մակարդակն է՝ 17.8%[7]:

Ապրանքների, ծառայությունների, աշխատուժի ազատ տեղաշարժ. 2015–2016 թթ. ԵԱՏՄ-ում ստեղծվել են միասնական շուկաներ դեղամիջոցների և բժշկական արտադրանքի ոլորտում, մշակվել և իրագործվում է միասնականացված քաղաքականություն մտավոր սեփականության, սպառողների պաշտպանության, աշխատանքային միգրացիայի և սանիտարական, ֆիտոսանիտարական, կարանտինային միջոցների կիրառման բնագավառներում, կազմավորվել է միասնական աշխատանքային շուկա, որը ենթադրում է անդամ երկրների բուհերի դիպլոմների ճանաչում: Նախատեսվում է 2025 թ. ստեղծել նաև ԵԱՏՄ միասնական ֆինանսական շուկա:

Հարկ է նշել, որ, անդամակցելով ԵԱՏՄ-ին, ՀՀ-ն խուսափեց Ռուսաստանից դեպի Հայաստան գազի, ցորենի, ադամանդի արտահանման մաքսատուրքերից[8], որոնց կիրառման դեպքում մեր տնտեսությունն էական վնասներ կկրեր:

---

[6] Տե՛ս http://uicarmenia.org/3416

[7] Տե՛ս http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Documents/Express_ Unemployment/expressunemp201801.pdf

[8] Տե՛ս ՀՀ տնտեսության վրա ԵԱՏՄ անդամակցության առանձին ազդեցությունների գնահատումը 2015 թ. առաջին կիսամյակի արդյունքներով // Զեկույց, Եր., «ԱՎԱԳ Սոլյուշնս» ՍՊԸ, 2016:

Արդյոք ԵԱՏՄ-ն նպաստե՞լ է մեր տնտեսության զարգացմանը, արդյոք ԵԱՏՄ-ում մեզ զգո՞ւմ ենք այնպես, ինչպես կարող ենք զգալ ԵՄ-ում: Բոլոր այս հարաբերությունները համեմատության մեջ են տեսանելի, ուստի կփորձենք որոշակի համեմատություն անցկացնել: Նախ նշենք, որ ԵՄ-ին անդամակցելու պարագայում մենք մուտք կգործեինք 500 միլիոնանոց շուկա՝ ԵԱՏՄ 183 միլիոնանոց շուկայի փոխարեն: ՀՆԱ-ով ԵՄ-ն 7.5 անգամ գերազանցում է ԵԱՏՄ-ին: Թեև կարելի է պնդել, որ Հայաստանին առավել ձեռնտու կլինի Ռուսաստանի, Բելառուսի և ԵԱՏՄ այլ երկրների հետ շուկայական հարաբերությունների ամրապնդումը, քանի որ հայկական ձեռնարկություններն ավելի ծանոթ են այդ երկրների շուկային, սակայն ԵՄ-ի հետ առևտրային հարաբերությունների մեջ մտնելը կնպաստեր, որ ձեռնարկությունները բարձրացնեին իրենց արտադրանքի որակը և որակյալ ապրանքների համար սահմանված չափանիշները՝ եվրոպական շուկայում առկա մրցակցությանը դիմակայելու համար: Դա բավական մեծ փոփոխություններ կարող էր առաջ բերել հայկական արտադրությունում, որոնք թեև սկզբում կարող էին որոշակի խնդիրների հանգեցնել, սակայն դրանք կլուծվեին հետագայում, և ԵՄ-ի հետ սերտ շուկայական հարաբերությունները կտային իրենց պտուղները: Ասոցացման համաձայնագրի ստորագրումից հետո նախատեսվում էր ԵՄ-ի ֆինանսավորմամբ ՀՀ-ում ստեղծել մեխանիզմներ, որոնք պետք է հեշտացնեին մեր ապրանքների՝ ԵՄ երկրներ տեղափոխելը: ՀՀ ձեռնարկատերերը ստանալու էին անվճար սերտիֆիկատներ, որոնք կհավաստեին, որ ՀՀ-ում արտադրված ապրանքները համապատասխանում են եվրոպական չափանիշներին: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ ազատ, արտոնյալ առևտրի վերաբերյալ պայմանագիր ԵՄ-ի հետ չենք կարող ունենալ, քանի որ ԵԱՏՄ-ին անդամակցելը հարաբերություններ է պարտադրում երրորդ երկրների հետ, և եթե ասոցացման համաձայնագրին միանանք, կվնասվի տեղական արտադրողը, քանի որ եթե ԵՄ ապրանքներից մաքսատուրքը հանվի, մեր տեղական արտադրողները մրցակցությունից դուրս կմնան[9]: Որպես հակադրություն կարելի է նշել նաև այն, որ ԵԱՏՄ-ն նոր ձևավորված կառույց է, որին անդամակցող պետությունների մեծ մասը դեռևս կայացման փուլում գտնվող զարգացող պետություններ են, ի տարբերություն ԵՄ-ին անդամակցող երկրների, որոնք աշխարհում գերակա դիրք են զբաղեցնում:

Կդառնան այս կանխատեսումները իրականություն, թե ոչ՝ պարզ կդառնա մոտ ապագայում, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, 2017 թ. նոյեմբերի 24-ին ՀՀ-ն ԵՄ-ի հետ ստորագրեց Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, և եթե Հայաստանը կատարի համաձայնագրով ստանձնած բոլոր պարտավորությունները, ապա կարող է ստանալ տնտեսական լուրջ աջակցություն ԵՄ-ից, այսպես կոչված՝ «ավելին ավելիի» դիմաց: Համաձայնագրով նախատեսվում է համագործակցություն ոչ միայն տնտեսական, քաղաքական, այլև անվտանգության հարցերում: Ըստ էության, ԵԱՏՄ շրջանակներում անվտանգության հարցում ամրագրված պարտավորություններ չկան, այդ իմաստով ՀՀ-ն կարող է ԵՄ-ի հետ նման համաձայնությունների մեջ մտնել: Համաձայնագիրը, սակայն, ազատ առևտրի մասին ոչինչ չի ներառում և ավելի քիչ հավակնոտ է, քան Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ կնքված Ասոցացման համաձայնագրերը[10]:

---

[9] Տե՛ս http://www.asparez.am /hayastani_etm_in_mianaly/#.WNqMb9KLS9J
[10] Տե՛ս http://www.eu4business.eu/hy/arhewtrayin-hamadzaynagrer

ՀՀ առևտրատնտեսական կապերն ու ապրանքաշրջանառությունը մի կողմից՝ ԵԱՏՄ-ի, մյուս կողմից՝ ԵՄ երկրների հետ, գրեթե համաչափ են բաշխված: Որոշ իմաստով կա բազմազանեցում ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման մասով: Հետևաբար՝ այսուհետ ևս մեր առևտրատնտեսական հարաբերությունները կառուցելիս պետք է փորձենք պահպանել արդեն ձևավորված հավասարակշռությունը, գտնել համագործակցության այնպիսի մոդելներ, որոնք հնարավորություն կտան զարգացնելու այդ հարաբերությունները: ՀՀ շահերից է բխում բազմազանեցված արտաքին առևտրատնտեսական հարաբերություններ ունենալը: Եվրոպական երկրների հետ արդեն կան ձևավորված տնտեսական ամուր կապեր, որոնք ոչ միայն չի կարելի կորցնել, այլև պետք է ընդլայնել: Սեփական շահերից բխող նախաձեռնություններն իրականացնելիս կարևոր է նաև ընկալված լինել թե՛ ԵՄ, թե՛ ԵԱՏՄ գործընկերների կողմից:

Փորձենք կատարել ռեգրեսիոն վերլուծություն և ցույց տալ, թե ինչ կտար Հայաստանին անդամակցությունը Եվրոմիությանը՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության փոխարեն: Համեմատական վերլուծության համար դիտարկենք տնտեսական հետևյալ ցուցանիշները. արդյունաբերական արտադրանք, արտաքին առևտուր երրորդ երկրների հետ, գյուղատնտեսական արտադրանք, գործազրկություն, հիմնական կապիտալ ներդրումներ, ՀՆԱ, փոխադարձ առևտուր: Դիտարկենք վերոնշյալ ցուցանիշների փոփոխություններն ինչպես ԵԱՏՄ-ում, այնպես էլ ԵՄ-ում և ՀՀ-ում 2015–2017 թթ. (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հիմնական տնտեսական ցուցանիշներն ըստ երկրների/երկրների խմբերի 2015–2017 թթ.

Ցուցանիշ	ԵԱՏՄ 2017	ԵՄ 2017[11]	ՀՀ 2017	ԵԱՏՄ 2016	ԵՄ 2016	ՀՀ 2016	ԵԱՏՄ 2015	ԵՄ 2015	ՀՀ 2015
ՀՆԱ	+1.8%	+2.7%	+7.5%	-0.2%	+1.9%	+0.2%	-2.3%	+2.1%	+3.0%
Արդյունաբերական արտադրանք	+2.6%	-0.8%	+12.6%	+1.1%	+4.5%	+6.7%	-3.4%	-2.0%	+5.2%
Գյուղատնտեսական արտադրանք	+2.5%	-1.2%	-2.9%	+4.5%	+4.0%	-5.2%	+2.6%	-0.8%	+11.7%
Հիմնական կապիտալ ներդրումներ	+4.6%	+7.5%	+2.4%	-0.2%	+33.5%	-12.5%	-7.3%	+20.0%	-1.2%
Գործազրկություն	-9.7%	-0.7%	-12.7%	-0.9%	-0.8%	+4.5%	+13.1%	-0.7%	+16.9%
Արտաքին առևտուր երրորդ երկրների հետ	+24.5%	+101.1 %	+20.3%	-12.1%	-0.2%	+3.3%	-33.6%	+20.0%	-23.5%
Փոխադարձ առևտուր	+27.2%	-1.6%	+40.7%	-5.8%	+8.0%	+53.7%	-25.3%	+7.1%	-20.9%

Ներկայացված աղյուսակի տվյալների հիման վրա փորձենք բացահայտել ՀՀ-ի և ԵԱՏՄ-ի միջև գոյություն ունեցող կապի բնույթը, որը հնարավոր է կոռելյացիոն գործակիցը (որպես հարաբերական ցուցանիշ) հաշվելու միջոցով: Արդյունքում կստանանք՝ ՀՀ-ի և ԵԱՏՄ-ի միջև գոյություն ունի հետևյալ կոռելյացիան[12].

[11] Տե՛ս http://trade.ec.europa.eu/doclib/docs/2018/september/tradoc_122530.pdf

[12] Բոլոր հաշվարկները և կանխատեսումները կատարել է հեղինակը՝ կիրառելով ռեգրեսիոն վերլուծության գործիքներ:

ՀՆԱ – 60.0%,
Արդյունաբերական արտադրանք – 81.9%,
Գյուղատնտեսական արտադրանք – -56.9%,
Հիմնական կապիտալ ներդրումներ – 12.2%,
Գործազրկություն – 97.5%,
Արտաքին առևտուր երրորդ երկրների հետ – 96.2%,
Փոխադարձ առևտուր – 67.1%:

Կոռելյացիայի ներկայացված ցուցանիշները ցույց են տալիս հետևյալը. *արդյունաբերական արտադրանքի* գծով ՀՀ և ԵԱՏՄ տնտեսությունների միջև առկա է ուժեղ կապ /կոռելյացիա/, համաձայն որի ԵԱՏՄ տնտեսական ցուցանիշի միջին աճը հանգեցնում է ՀՀ արդյունաբերական արտադրանքի 81.9% աճի, որը համարվում է ամենադրական միտումն այս երկու համակարգերը համեմատելիս: ՀՆԱ և *փոխադարձ առևտուր* ցուցանիշների միջև նույնպես առկա է դրական, սակայն ոչ ուժեղ կոռելյացիա, որը, որպես ցանկալի երևույթ, դրական ազդեցություն ունի ՀՀ-ի համար: *Հիմնական կապիտալ ներդրումների* գծով առկա է թույլ կոռելյացիա, որը ցույց է տալիս կապիտալ ներդրումների նշանակալի բացակայությունը ԵԱՏՄ-ից դեպի ՀՀ: Ի տարբերություն վերոնշյալ ցուցանիշների՝ *գյուղատնտեսական արտադրանքի* գծով ընդհանրապես առկա է հակադարձ կոռելյացիա նշանակալի չափով (այսինքն՝ տեղի է ունեցել գյուղմթերքի ներմուծման առավել մեծ տեմպերով աճ՝ ի տարբերություն արտահանման), որը գնահատվում է որպես խիստ բացասական ազդեցություն: *Գործազրկության* ոլորտում նույնպես բացասական շարժ է արձանագրվել. ԵԱՏՄ գործազրկության մակարդակի միջին աճին զուգընթաց, միջինում ՀՀ գործազրկության 97.5% աճի պատճառով, իսկ *արտաքին առևտուր երրորդ երկրների հետ* ցուցանիշի գծով երկու տնտեսությունների միջև առկա բարձր կոռելյացիան հուշում է, որ ՀՀ ներքին սպառողներին չի գոհացնում ԵԱՏՄ ներքին շուկայի արտադրանքը, և նրանք ստիպված մեծացնում են առևտուրը երրորդ երկրների հետ:

Համեմատական վերլուծության համար ներկայացնենք ԵՄ՝ 2015–2017 թթ. նույն ցուցանիշները: Քանի որ ՀՀ-ն ԵՄ կազմում երբևէ ընդգրկված չի եղել, և ԵՄ ուղղակի տնտեսական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա չունի որոշակի տվյալներ, վերլուծության համար վերցնենք ԵՄ և վերջինիս կազմում գտնվող այնպիսի պետությունների տնտեսությունները, որոնք առավել մոտ են ՀՀ տնտեսությանը և համեմատելի են (Ռումինիա, Բուլղարիա): Նման երկրների վրա ԵՄ ազդեցության կոռելյացիան ունի հետևյալ պատկերը.

ՀՆԱ – -44.2%,
Արդյունաբերական արտադրանք – -70.3%,
Գյուղատնտեսական արտադրանք – -6.5%,
Հիմնական կապիտալ ներդրումներ – 81.1%,
Գործազրկություն – 38.1%,
Արտաքին առևտուր երրորդ երկրների հետ – 95.9%,
Փոխադարձ առևտուր – 99.7%:

Կոռելյացիայի ներկայացված ցուցանիշները ցույց են տալիս, որ ԵՄ-ն բացասական ազդեցություն է ունեցել ուսումնասիրվող երկրների արդյունաբերական արտադրանքի աճի միջին տեմպի վրա, որը չի կարելի միանշանակորեն բացասաբար բնութագրել, քանի որ արդյունաբերական արտադրան-

քի աճը, սովորաբար, տեղի է ունենում զարգացող երկրներում, իսկ զարգացած երկրներում արդյունաբերությունը բացասական միտում ունի՝ ելնելով նորագույն տեխնոլոգիական հնարավորություններից և շրջակա միջավայրի պահպանման նպատակից: *Արտաքին առևտուր երրորդ երկրների հետ* ցուցանիշն այս դեպքում նույնպես աճման բարձր միջին միտում ունի, որն, ամենայն հավանականությամբ, դրական միտում կհամարվի, քանի որ, դրա հետ կապված, առկա է նաև *փոխադարձ առևտրի* շատ բարձր կոռելյացիա: Գյուղատնտեսական արտադրանքի գծով առկա է բացասական, բայց շատ թույլ կոռելյացիա, իսկ գործազրկության աճը միջինում 38.1% է՝ ի տարբերություն ԵԱՏՄ–ՀՀ նույն ցուցանիշի գծով առկա բարձր կախվածության: Միավորման արդյունքում հիմնական կապիտալ ներդրումների գծով տեղի է ունեցել նշանակալի մեծ աճ, որն էլ հենց արագ զարգացման հիմք է հանդիսացել ուսումնասիրվող երկրների տնտեսությունների համար, սակայն ՀՆԱ գծով տեղի է ունեցել բացասական տեղաշարժ, որը կարելի է այս միության «միակ» էական բացասական հանգամանքը համարել (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ հիմնական տնտեսական ցուցանիշների հավանական փոփոխությունները ԵՄ-ին անդամակցության արդյունքում[13]

Ցուցանիշ	*Ակնկալվող փոփոխությունը*	*Ակնկալվող փոփոխության ուղղությունը*
Արդյունաբերական արտադրանք	ոչ էական	բացասական
Արտաքին առևտուր երրորդ երկրների հետ	ոչ էական	դրական
Գյուղատնտեսական արտադրանք	ոչ էական	դրական
Գործազրկություն	էական	դրական
Հիմնական կապիտալ ներդրումներ	էական	դրական
ՀՆԱ	էական	բացասական
Փոխադարձ առևտուր	էական	դրական

Քանի որ համեմատական վերլուծությունն ակնհայտ է, փորձելով կանխատեսել միևնույն ցուցանիշները ՀՀ-ի համար, կարող ենք փաստել հետևյալը. ԵԱՏՄ-ի փոխարեն անդամակցելով ԵՄ-ին՝ ՀՀ-ն կունենար գործազրկության ավելի ցածր մակարդակ և հիմնական կապիտալ ներդրումների զգալի աճ, սակայն կգրանցվեր ՀՆԱ նվազում: Իսկ թե վերջինս ինչ ձևով կանդրադառնար տնտեսական աճի վրա ընդհանուր առմամբ, դրան կանդրադառնանք մեր հետագա վերլուծություններում:

Հարկ է նշել նաև աշխարհահռչակ Ecorys կազմակերպության կողմից հաշվարկված տվյալները Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրման վերաբերյալ[14]: Ըստ դրա՝ ԵՄ-ին միասնացման արդյունքում մի քանի տարի հետո Հայաստանի ՀՆԱ-ն պետք է ունենա լրացուցիչ 2.3%-անոց աճ, իսկ պետական բյուջեի եկամուտները կավելանան լրացուցիչ 146 միլիոն դոլարով, 15%-ով կավելանան նաև Հայաստանից արտահանման ծավալները, կլինի սպառողական ապրանքների գնաճի 1.2%-անոց փոխհատուցում, աշխատավարձերի 2.7%-անոց լրացուցիչ բարձրացում, աշխատաշուկայում բարձր որակավորմամբ աշխատատեղերի քանակի լրացուցիչ 7%-անոց աճ և այլն:

---

[13] Հաշվարկել է հեղինակը գծային ռեգրեսիայի միջոցով:

[14] Տե՛ս Trade Sustainability Impact Assessment in support of negotiations of a DCFTA between the EU and the Republic of Armenia. Final Report: European Commission - DG TRADE Rotterdam, 3 July 2013:

Այսպիսով՝ ամփոփելով ՀՀ–ԵՄ և ՀՀ–ԵԱՏՄ ինտեգրման արդյունքներն ու ակնկալիքները, կարող ենք ասել, որ երկու դեպքում էլ ավելի լավ արդյունքներ գրանցելու համար պետք է այնպիսի քաղաքականություն վարել և այնպիսի քայլեր ընտրել, որոնք կամրացնեն ՀՀ տնտեսական դիրքերը և կմեծացնեն կայուն զարգացման հնարավորությունները:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ տնտեսության վրա ԵԱՏՄ անդամակցության առանձին ազդեցությունների գնահատումը 2015 թ. առաջին կիսամյակի արդյունքներով // Զեկույց, Եր., «ԱՎԱԳ Սոլյուշնս» ՍՊԸ, 2016:
2. Հաշվետվություն Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ:
3. Trade Sustainability Impact Assessment in Support of Negotiations of a DCFTA between the EU and the Republic of Armenia. Final Report: European Commission - DG TRADE Rotterdam, 3 July 2013.
4. http://mfa.am/
5. http://armstat.am/
6. http://www.eurasiancommission.org/
7. http://ec.europa.eu/
8. https://eeas.europa.eu/
9. http://www.eu4business.eu/
10. http://trade.ec.europa.eu/

МАРЕ ХАЧАТРЯН
Ассистент кафедры финансов АГЭУ,
кандидат экономических наук

Экономические последствия интеграции РА–ЕС и РА–ЕАЭС.– В статье представлены положительные и отрицательные последствия воздействия ЕС и ЕАЭС в разных секторах экономики Армении, и сделана попытка проанализировать возможности развития в результате интеграции с данными союзами.

Ключевые слова: *ЕС, ЕАЭС, результаты интеграции, развитие экономики.*
JEL: F5, F50, F53

MARE KHACHATRYAN
Assistant at the Chair of Finance at ASUE,
PhD in Economics

Economic Consequences of the RA–EU and RA–EAEU Integration.– In this article the author has presented the positive and negative effects of the EU and EAEU influence in different sectors of the economy of the RA, and an attempt has been made to analyze the opportunities of the development as a result of integration to these unions.

Key words: *EU, EAEU, results of integration, development of the economy.*
JEL: F5, F50, F53